ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1924, էջ 189)

ԿԸ.

Իպրահիմ փաշա անուամբ տաճկի մը քրիստոնեայ դառնալուն շուրջ կը գտնենք հետեւեալ հետաքրքրական նկարագրութիւնը։

Գիրաւայժաի և. Գերյարգելոյ Հսրդ մերում Մխիթարայոյ Աբբայի վերլուծական զորդիական ողջոյն

... Յառաջ քան զտարի մի տաճիկ ոմն որոյ անունն էր ապրահամ, որ եհմուտ ի գաթէգումէնոն վէնէցիոյ, և մկրտեցաւ, զոր և ուսուցանէր խաչատուր վարդապետն, գիտեմ զի առեալ զդրամս բազմաց՝ փախեաւ ի վենետիկոյ ընդ այլոց տաճկաց. սա հանդիպեալ է ի ճանապարհի կնոջ Նեմցէի էլչիին կոստանդինուպօլսոյ ընդ գալն նորա անտի աստ. և խնդրեալ է զնա ածել զինքն ի վենետա առ ի լինել քրիստոնեայ, և մկրտիլ. և ես տեսի զնա աստ ի վենետա և ճանաչեցի. և ջանայ մկրտիլ, որպէս ասեն հայք։ Սա յորժամ եռես զիս՝ փախեաւ յայլոց իմոց. և ես յայլ անգամ ևս տեսի զնա, բայց ոչ ցուցի զծանօթութիւն։ Իսկ ես ասացի Հայոց թէ ես գիտեմ զսա մկրտեցեալ զոլ. վասն որոյ ասացին ինձ ծանուցանել եպիսկոպոսին։ Եւ ես պարաւանդեալ ի խղճէ մտաց՝ գնացի և ծանուցի նմա. և նա առաքեաց զիս առ գաբէլանն գարտինալին. իսկ սա ասաց զի գրիցեմ զվկայութիւն թէ որպէս գիտեմ զնա մկրտեցեալ զոլ, և ուստի՞ ճանաչեմ զնա։ Իսկ ես պատասխանեցի բանի, և ոչ կամեցայ գրով զի մի՞ ընկղմիցեմ զիս ի սպաղմունս։ Գնացի և առ էլչին վէնէցիոյ, և սէգրէթարն ասաց թէ ոչ կարէ տալ պատասխանի, զի պարաւանդեցեալ է այսօր գրել զգիրս փստի, և այլն։...

Յամի Տեառն 1737
Յունիսի 1 Վենետա

Նուաստագունեղ Ցառայ
Հ. Թ[էոդորոս] Յ[ովհաննէսեան] ի Կ. Անդօնեան

ԿԹ.

Այս երկրորդ նամակաւ, մէկ քանի ուրիշ տեղեկութիւններէ զատ, նոր մանրամասնութիւններ կու տայ Նոյն Հ. Թ. Յովհաննէսեան՝ Իպրահիմի կրոնափոխութեան շուրջ։

digitised by A.R.A.R.@

Գերապայծառի և գերյարգելցիոյ Տեառն Տեառն Մխիթարայ
Աբբայի Հօրդ մնորում մատուցանեմ գիտնարհնական ողջոյն։

. . . . տրամեցայ իմանալով զիջուածոյ բազմաց Գերյարգելութեանդ. Տէր Յիսուս ինքն առողջացուսցէ։ . . . . ոչ ան իպրահիմ պաշան, գիտելի է, զի ճշմարտեցաւ ասացեալն իմ, բայց իբր ի ծածուկ, զի պատրի դաւիթն քննեալ է զնա, և գտեալ է զնա որպէս և ես ասացեալ էի նմա։ Եւ նա ասացեալ էր, թէ վասն այն ասացեալ է զինքն զոլ տանիկ, և կամիլ մկրտիլ, որպէս զի էլչին կինն տիրութիւն առնիցէ նմա, և բերցէ ի պէշն, առ ի դնել զնա ի պաշտօնի իմիք, և այլն։ Իսկ պատրի Դաւիթն ասաց ինձ, ոչ ումիք ասել զնմանէ, թէ իսկապէս այն տանիկն իցէ, և այժմ նա կրթէ զնա յիրս հաւատոյ, և զգեցեալ է նա զզգեստս նէմցիի... Մինչ եկն [պաշպալովցի Տէր Մինասն] ի Վենետ՝ պարծէր և ասէր, թէ Աղաչայ Պետրոսն 240,000 զօլաթայ դնէ, որպէս զի ինքն լինիցի (այսինքն Տէր Մինասն Խնկանոսեան) եպիսկոպոս ի վերայ պաշֆալովին. զի ինքեանք ոչ կամին ընդունիլ զգերապատուելի Տէր Մինասն կեղացին եպիսկոպոս . . . . . իրակութիւնք գերապատուելի տէր Մինասին արդէն իսկ կատարեցան, միայն սպասէ տիրլօմային, և գալստեան թագաւորին ի լաքսէմպուրքէն, որպէս զի գնացեալ առաջի նորա՝ ընկալցի ի ձեռանէ նորա ի պարանոց իւր զնաչն եպիսկոպոսական, և զթագն հայրապետական, զոր տացէ Աստուած մեզ։...

Մնամ պատրաստական յամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հ. Թ. Յոհաննէսեան ի Կար. Անդօնեան

Ֆամի Տեառն 1737
Յունիսի 15 ի Վենետ

P. S. Դարձեալ մեծ պատրաստութիւն զոյ պատերազմի աստէն. և այնքան ստիպով գործեն զնաւան, մինչ զի զԴ նաւն արդէն իշուցին ի ջուրն, և զԴ կալէրսն ես յուսամ զկնի ոմանց աւուրց իշուցանելոց, և զբազում մեծամեծ թօփս մերձ նաւուցն պատրաստ տեսի ...։

Հ.

Կը վախճանի Հ. Յ. Բուզայեան Պելկրատու մէջ և իրեն կը յաջորդէ Հ. Միք. Վ. Սեբաստացի։

Սա կը զրկէ այս շահեկան նամակը ճանապարհէն, դեռ իր պաշտօնատեղին չհասած։

Գերյարգելցիոյ Տեառն Տեառն Մխիթարայ Աբբայի
զորովագուր հօրդ իմոյ

. . . . . ի վաղիւն թերևս գնայցեմ ի սուրբ սեստեփաննոս, տակաւին ոչ տեսի վասն սբաղմանցս, նաև կայսրն մեծ հանդիսիւ գայ յեկեղեցին, լինին թափուռք, արձակմունք հրացանից, զի է տարեդարձական օրն ազատութեան վենայու ի տանկաց, որ է 15 սեպ. և թէ հարցանէք ի կողմանէ պատերազմի, ոչ զոյ նոր ինչ. և ոչ ինչ զրոյց, այլ այս միայն, զի սէտիոն վիտինու յետս քարշեալ, զի փոխնչիփէ լօրէնայոյ եկեալ է աստ, որ է փեսայ կայսերն. և եղբայրն նորին անկեալ ի մեծ հիւանդութեան ի ճանապարհին մնացեալ է և ի կողմն պօսնայու զոչ ինչ գործ գործեալ են, այլ անդ եղեալ կոտորմունք ի մեծագոյն թուոյ ասեն. ԺԴՌ [14,000], վասն առման օգուու մոսկօֆու աստ տօնանմայ

digitised by A.R.A.R.@

արարեալ են. իբրու մի ամիս է։ Դեռ ասեն թէ թագաւորն տաճկաց զգիր ուղարկեալ կայսերն խնդրել առնել զխաղաղութիւն ի մէջ երիցն։ Դեռ զոյ աստ սուտ զրոյց, թէ վենետիկցին ևս առնէ պատերազմ ընդդէմ տաճկաց զի գ40 նաւ զինուորեալ ուղարկեալ է ընդդէմ տաճկաց։ — ... վասն Իպրահիմին, այսինքն մալքօին. մալքօն եկաւ մեր լայիքօին հետ մեր վանգի, ինձ կամէր խոստովանել զիւր որպիսութիւնն, Հայր Թէոդորոսն ինձ ծանոյց զորպիսութիւն նորին.....։

Գերյարգութեան քում

Գրեցաւ յամի Տեառն 1737ին

Մնամ պատրաստական ծառայ ամենայնի

Սեպտեմբերի 14ին

Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1 գիր ի վենայու

ՀԱ.

Վերնագիր չկայ հետագայ թուղթին վրայ, վասն զի մասն է կորստուած նամակի մը. սակայն, յայտնի է, գրուած է առ Միխիթար։

Հ. Միքայէլ Վ. քաղաքական դէպքերու խղճամիտ շարունակութիւնն է որ կը հաղորդէ Վենետիկ։

... Դարձեալ եթէ կամիք իմանալ զլուր ինչ ի կողմանէ պատերազմի, հաւաստի և ճշմարիտ լուր ոչ զոյ. ի լաւ անդր ամենեին ոչ զոյ. բայց ի վատթար կողմ պէսպէս զրոյցք զոն. մսրլուի տղան ասաց թէ 30,000 չափ զօրք հիւանդ կայ, վիտինու տկէն քաշուեր են, անդէն անկեալ է հիւանդութիւնն, վասն այսորիկ քաշուեր են ի կողմն դմշվարաց։ Եւ յայլմէ ասացեալ ի նիշու կողմէ խմբին 16,000 զօրք ուղարկեալ ի կողմն պօսնայու տաճիկքն զոլով բազումք, ի մէջ առեալ զնոսա և կոտորեալք։ Եւ յայլոց, թէ զօրք տաճկաց ի կողմունս գռայովու եկեալ բանակեալ, ի ձմեռանս կամ զդմշվար, կամ զպէլիրատ պաշարէ։ Եւ յայլմէ, թէ ի մէջ զօրաց մոսկօֆու ևս հիւանդութիւն անկեալ, յետս քաշեալ, պէնտէրի առնուլն ոչ է ճշմարիտ, ասէն աւելի չարիք լսենք, քան թէ ի վէնէտիկ։ Աստ զապրանս տաճկաց և յունաց որք են ստորադրեալք տաճկաց կնքեալ և իբր յարգելանոցի եղեալ էին. երկու օր է, որ բացին և թոյլ ետուն։ Կայսր ոչ է աստ, այլ արտաքոյ քաղաքին, ի յանտառս յամենայնումն աւուր որս զնայ. ոմանք ասեն թէ առ ի փարատել զվարանմունս իւր առնէ զայս, ասեն թէ ուր գտանիցի արդեօք փրինչիփէ եճէնիոսին պէս, որ զպատերազմ կառավարիցէ։ Ցորժամ մեռեալ է Եւճէնիոսն, տաճիկքն ասացեալ են աստ, կէթտի կառթալլն մի գանատը.... Դեռ լուայ թէ ի նիշու հայեր եկեալ են ի պէլղրատ, ևս մի քահանայ իրիցկնով. լուայ ևս թէ ի ստամպոլ եայսախճի են եղեալ ի դրունս եկեղեցեաց հռումց և հայոց, զի տուայ արասցեն վասն պատերազմին։....

Գերյարգութեան քում

Գրեցաւ յամի Տեառն 1737ին

Մնամ պատրաստական ծառայ ամենայնի

սեպտեմբերի 21ին

Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

2 գիր ի վենայու

digitised by A.R.A.R.@

ՀԲ.

Պաշպալովի կամ Եղիսաբեթուպոլսի առաքելութիւնը մշակողներէն մին է Հ. Թէոդորոս վարդապետ Յովհաննէսեան Պաշպալովցի, որուն երկրորդ թուղթն է որ կը հրատարակենք հոս։

Նա իւր քաղաքէն առ Մխիթար կը գրէէ պատմական տեղեկագրութիւնս։

Օ. Ե. Ց. Ք. = Օ(գնեալ)։ Ե(գիցի)։ Ց(խուս)։ Ք(րիստոս)։

Գնչապայծառի և Գերյարգելոյ Տիսան Մխիթարայ Աբբայի
Հօրդ մեզում արժանաւորագունեղի՝ մեծաւ խոնարհութիւնամբ զոտս համբուրելով
մատուցանեմ զորդիական ողջոյն, և այլն։

..... բոլոր դրանսիլվանիայ յոգւոց հանեն սակս մեծի երկիւղի, և ի ահացուցիչ կարծեաց եկելոց ի վերայ տիեզերաց, մինչ զի գրեթէ ամենեքեան զամենայն գոյս իւրեանց փախուցին ի սիպին, ոչ միայն հայք, այլ նաև մահառք. և զոյ ձայն թէ Պոնապավ ուրացողն, և Ռագօցիին որդին բազմութեամբ զօրաց տաճկականաց մտանելոց են ի դրանսիլվանիա, և եկեալ՝ հրաման եհան, զի ամենայն մահառք զինուորիցին. (ենթ պատրուակի, թէ ընդդէմ տաճկաց մարտնչիցին, բայց վախճան նորա էր, զի ի գալ տաճկին և Ռագօցիին՝ սոքա պատրաստք լիցին առ ի մարտնչիլ ընդդէմ կայսերն)։ Բայց իբրև իմացաւ կայսրն՝ հրաման եհան, զի մի ոք մահառ զինուորիցի։ Եւ այս յոյժ բարի եղև վասն հայոց. քանզի առաւել երկնչիմք ի ընտանի թշնամեաց, այսինքն ի մահառաց, քան թէ ի տաճկաց։ Իսկ վերոասացեալ ՀՀնրալն իբրև իմացաւ, թէ ի յայտ եկին դաւաճանութիւնք նորա՝ էառ զթուղթսն ի ընդդէմ, և այնպէս սատակեցաւ։ Դարձեալ լուաք թէ մօտոզոն առեալ իցէ զՊէնտէր, և տաճիկքն տուեալ իցեն նմա գերկիրն մինչև ի սահմանս թունային. բայց այսու պայմանաւ, զի յայսմիկ ձմեռան մեասցեն տաճիկքն յերկիրն յայն մինչև ի գարուն, իսկ ի գարնան ելցեն ինքեանք, և ոչչեն մեասցէ անդ ի ներքոյ մօսգին։ Ոչ զոյ չաբաթ, յորում ոչ լսիցեմք զնորագոյն լուրս երկիրալիցս. ուստի եմք ի մեծի նեղութեան և ի կասկածանս։ Դարձեալ ի յանցեալ թղթոջ աղաչեալ էի թէ գրիցէք ինձ, եթէ վէնէտիկցիք առեալ իցեն զմոռայ թէ ոչ. քանզի այսպէս լուեալ էի ի կեռլայ, թէ զկէսն Մոռայի առեալ իցեն....։ Իսկ ես մեծաւ բաղձանօք տեղեկանալ կամիմ զտպագրութենէ Մեկնութեան Աւետարանին և գյառաջացմանէ վանիցն, զոր կամէիք առնել ի Բատուա։....

Գրեցաւ յԷլիզապէթ քաղաքն
1737 *Նոյեմբերի* 1

Մնամ պատրաստական յամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հ. Թէոդորոս Յովհաննիսեան
կրօն. ի կարգէ Անդօնեան

ՀԳ.

Բուզայեանի մահուան շուրջ կը գտնենք՝ Հ. Միքայէլի հետագայ նամակին մէջ՝ կարևոր մանրամասնութիւններ, որոնք կը ծառայեն միանգամայն անոր կենսագրութեան իբրև նորագոյն աղբիւրներ։ Բաց աստի՝ մեր նամակագիրը կու տայ ինչ ինչ ժամանակակից լուրեր։

digitised by A.R.A.R.@

Գերյարգելոյ Աբրահամ Հօրդ իմոյ, տեսան տեսան Միսիրարայ Աստուածաբանութեան վարդապետի

Բազմաւ կարօտիւ և սիրալիր ողջունիւ յայտ լիցի գերյարգութեան քում, զի ահա հագիւ զկնի ութից աւուրց գալստեան իմոյ աստ, եղեալ եղէ ի վերայ պաշտօնի իմոյ յեպիսկոպոսէ տեղւոյս, և նախ վասն ստանցայ[1] գրել տալոյ և առնլոյ երկու ֆիօրին ծախս գնաց գափէլանի եպիսկոպոսի. այս այն է զոր զհայր յակոբն խոստովանեցուցեալ և զվերջի օձում տուեալ է նմա, և սա զամենայն ինչ գրեալ է թէ զգրեանս և թէ զլաթեղէնս, եղեալ ի մէջ տապանակի կնքեալ, հրամանաւ եպիսկոպոսին ոչ ետուն ինձ, այլ զբանալիս առեալ տարան և պահեն մերձ ինքեանց, և՝ ասացին թէ տէկոէթօ գոյ, զի միսիօնարաց ինչն են սրբոյ ժողովոյն փոօփականտաֆիտոյ և ասացին թէ գրեա մեծաւորին քոյ, զի ծանուսցէ սրբոյ ժողովոյն, որ տայցեն զհրաման, տալ քեզ գայ-սոսիկ իրս....։ Խիստ վարանման և տրտմութեան մէջ եմ վասն պատերազմի թէ զինչ հետևելոց է, մինչ ի սոսա ուժ ինչ ոչ երևի այժմ. և տանիկն զազանացեալ, ի կողմունս գոռվայու ամայացուցեալ է, գերելով, սպանանելով և քանրելով։ Աստ ասեն թէ ի հետևեալ գարնանս վէնէտիկցին ևս ելանէ ի պատերազմ. բայց թուի թէ սուտ իցէ...։ Թանկութիւն կերլեաց և զժուարագիւտ։... ի նիշու բազումք եկեալ են աստ խուժադուժք, հիւանդութիւնք բազումք ի մէջ քաղաքիս, ևս ի մէջ հայոց... ... Այս Եսայի տղաս [ծառայն Հ. Միքայելի], զբազում և զարմանալի աշխատութիւնս և զծառայութիւնս արարեալ է հայր յակոբին ի ժամանակս հիւանդութեան նորին, ինքն միայնակ մինչև ի յաւանդումն հոգւոյ նորին. ցաւն հայր յակոբին խիստ դառնագոյն և աղետալի, ինքն ասեր է բերանովն թէ եօթ ցաւ ունիմ, ոտից մինչև ի լանջն ուռուցեալ, ի մի կողմն վէրք բացեալ, երկար ժամ ի նոյն կողմն կալով... ապա թէ զակաւ կերակուր ընդունիլ կարէր ի մէջ գիշերի, այն ևս մայր ի կոկորդն, և ասացեալ է. այս ինչ պինդ հոգի ունիմ....։

Գերյարգութեան քում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ վ. Սեբաստացի

Գրեցաւ յամի Տեառն 1737
Նոյեմբերի 12ին
2 գիր, ի Պէլրդատու

---

1. Աղաչանք, խնդիր։

Շարունակելի

Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՑԵԱՆ

(Քամիէն) շարժուած ծաղիկը աւելի բոյր կ՚արձակէ։

·✻·

Նաւահանգիստ հասնելէն վերջ, որչափ քաղցր է յիշել անցած փոթորիկները։

·✻·

Ողալու համար ծնածը չի կրնար թռչիլ։

digitised by A.R.A.R.@